ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2016թ. թիվ 491-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՌԱՏ ՁՅԱՆ, ՈՒԺԵՂ ՁՆԱԲՔԻ, ՁՆԱՀՅՈՒՍԻ ԵՎ ՄԵՐԿԱՍԱՌՈՒՅՑԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տարածքում 2016-2017 թվականների ձմեռային ժամանակահատվածում հնարավոր առատ ձյան, ուժեղ ձնաբքի, ձնահյուսի և մերկասառույցի առաջացման, դրանց հետևանքով տրանսպորտային միջոցների արգելափակման և (կամ) ճանապարհա-տրանսպորտային պատահարների ժամանակ անհրաժեշտ միջոցառումների կազմակերպման նպատակով, համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014թ. մայիսի 27-ի թիվ 184-Ա որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակներում ՀՀ Լոռու մարզի բնակչության պաշտպանության պլանի» 8-րդ հավելվածի, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի « Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

1) ճշտել արտակարգ իրավիճակներում գործելու և զինվորական մարմինների հետ փոխհամագործակցության պլանները.

2) կազմակերպել և իրականացնել փրկարարական աշխատանքներ՝ ուղղված առատ ձյան, ձնաբքի, ձնահյուսի և մերկասառույցի հետևանքով տրանսպորտային միջոցների արգելափակման և (կամ) ճանապարհատրանսպոր-տային պատահարների ժամանակ մարդկանց կյանքի և առողջության պահպանմանը, տեղի ունեցած դեպքերի և պատահարների հետևանքների վերացմանը.

3) համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի Լոռու մարզային ծառայությունից ստացված հիդրոօդերևութաբանական իրադրության հնարավոր վատթարացման, ինչպես նաև այլ մարմիններից ստացված ավտոճանապարհների անցանելիության

մասին տեղեկատվության հիման վրա տեղեկացնել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ծառայությունների, ավտոմոբիլային ճանապարհներ սպասարկող կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ նրանց կողմից անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:

2. Առաջարկել ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝

1) համայնքների 2017թ. բյուջեներում նախատեսել գումարներ՝ ձմեռային ժամանակահատվածում հնարավոր առատ ձյան, ուժեղ ձնաբքի, ձնահյուսի և մերկասառույցի առաջացման, դրանց հետևանքով տրանսպորտային միջոցների արգելափակման և (կամ) ճանապարհատրանսպորտային պատահարների ժամանակ անհրաժեշտ աշխատանքների կազմակերպման և իրականացման համար.

2) կազմակերպել համայնքային նշանակության ավտոճանապարհները, ավտոճանապարհների մայթերը ձնից և մերկասառույցից մաքրելու աշխատանքները՝ տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը ապահովելու և դժբախտ դեպքերից խուսափելու համար.

3) կազմակերպել և իրականացնել աշխատանքներ՝ համայնքի տարածքում խցանված կամ արգելափակված տրանսպորտային միջոցները դուրս բերելու և ուղևորներին համապատասխան օգնություն ցուցաբերելու ուղղությամբ.

4) մշտապես պատրաստ վիճակում ունենալ անհրաժեշտ քանակի աղի և ավազի խառնուրդի, ինչպես նաև վառելիքաքսայուղային նյութերի պաշար, մեքենա-ների և մեխանիզմների համար մասեր և այլ միջոցներ.

5) միջոցներ ձեռնարկել ձմեռային պայմաններում ձնամաքրիչ և ձնահավաք մեքենաների անխափան աշխատանքն ապահովելու համար:

3. Առաջարկել ՀՀ Լոռու մարզի ավտոմոբիլային ճանապարհներ սպասարկող կազմակերպությունների («Լոռի ՃՇՇ» ՓԲԸ, «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ, «Արգիշտի» ՍՊԸ, Սպիտակի «Ճանապարհ» ՓԲԸ, «Տաշիրի ՃՇՇ» ՓԲԸ) ղեկավարներին՝

1) ճշգրտել արտակարգ իրավիճակներում գործելու պլանը.

2) ի հայտ բերել առատ ձյան, ուժեղ ձնաբքի, ձնահյուսի և մերկասառույցի հետևանքով սպասարկվող ճանապարհներում առաջացած անանցանելի կամ դժվար անցանելի հատվածները, դրանց վերաբերյալ անմիջապես տեղյակ պահել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության 911 ծառայությանը, ինչպես նաև արձագանքել 911 ծառայությունից ստացված ահազանգերին.

3) կազմակերպել սպասարկվող ավտոճանապարհների ձնից և մերկասառույցից մաքրելու աշխատանքները՝ տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունն ապահովելու համար:

4. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետին՝

1) առատ ձյան, ուժեղ ձնաբքի, ձնահյուսի և մերկասառույցի հետևանքով մարզի ճանապարհներում առաջացած անանցանելի կամ դժվար անցանելի հատվածների հայտնաբերման մասին անմիջապես տեղյակ պահել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության 911 ծառայությանը.

2) անհրաժեշտության դեպքում ճանապարհների առավել վտանգավոր հատվածներում սահմանել հերթապահություն.

3) ցուցաբերել օգնություն ճանապարհին մնացած տրանսպորտային միջոցների վարորդներին և ուղևորներին, անհրաժեշտության դեպքում ուղղորդել նրանց դեպի անվտանգ տարանցիկ ճանապարհներ,

4) աջակցել իրականացվող փրկարարական և այլ աշխատանքներին.

5) անհրաժեշտության դեպքում կազմակերպել (արգելել) տրանսպորտային միջոցների երթևեկությունը անանցանելի և դժվար անցանելի ճանապարհահատվածներում:

5. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի Լոռու մարզային ծառայության համակարգողին՝

մարզի տարածքում եղանակի կտրուկ փոփոխությունների՝ սպասվող ձյան, քամու ուժգնության, ճանապարհների մերկասառույցի, տեսանելիության վատթարացման վերաբերյալ տեղեկատվությունն անմիջապես հաղորդել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության 911 ծառայություն և համապատասխան շահագրգիռ մարմիններ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետին՝

հիդրոօդերևութաբանական իրադրության վատթարացման, ինչպես նաև մարզի տարածքի ճանապարհների անանցելիության կամ դժվարանցանելիության վերաբերյալ նախազգուշացնել միջհամայնքային երթևեկությունը սպասարկող կազմակերպություններին, անհրաժեշտության դեպքում արգելել նրանց կողմից հասարակական տրանսպորտային միջոցների շահագործումը:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետին՝

ժամանակին նախազգուշացնել և ապահովել հավաստի ու օպերատիվ տեղեկատվությամբ մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ հիդրոօդերևութաբանական իրադրության վատթարացման սպառնալիքի մասին:

8. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

պատրաստ լինել ահազանգերի դեպքում տուժածներին տեղում բժշկական օգնություն ցուցաբերելու, անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժում կազմակերպելու համար:

9. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. դեկտեմբերի 16
ք.Վանաձոր